ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Սիս համայնք, գ. Սիս, հեռ. 098 29 00 29
էլ. փոստ sis.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«16» Դեկտեմբերի 2020 թվականի N 20

ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 07 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին »Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի դրույթներով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

Հաստատել թիվ 07 նիստի օրակարգը

2) Սիս համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը սահմանելու մասին:
3)Սիսի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
4) Սիս համայնքի հաշվեկշռում գրանցված գույքի գույքագրման արդյունքների հաստատման մասին:
5) Սիս համայնքի տարածքում 2021թ-ի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին:
6) 2021թ-ի համար Սիսի ՀՈԱԿ «Անուշիկ» մսուր մանկապարտեզի ծնողական գումար, վարձավճար սահմանելու մասին:
7) Սիս համայնքի 2020 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին

Ավագանու անդամներ

Կողմ (7)	Դեմ (0)	Ձեռնպահ(0)
Ա. Ռեգունց		
Ա. Մարգարյան		
Ե.Լազգիյան		
Ա. Խաչատուրյան		
Ա.Առուշանյան		
Ռ. Վարդանյան		
Ա. Թարխանյան		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՅԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ

2020թ. Դեկտեմբերի 16
Գ. Սիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Սիս համայնք, գ. Սիս, հեռ. 098 29 00 29
էլ. փոստ sis.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«16» Դեկտեմբերի 2020 թվականի N 21-Ա

ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ կետի և 28-րդ հոդվածի 1.2)-րդ կետի դրույթներով, *համայնքի ավագանին որոշում է՝*

Համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը սահմանել ամսական 230000 դրամ (երկու հարյուր երեսուն հազար դրամ):

Ավագանու անդամներ՝

Կողմ (7) Դեմ (0) Ձեռնպահ(0)

Ա. Ռեզունց
Ա. Մարգարյան
Ե.Լազգիյան
Ս. Խաչատուրյան
Մ.Առուշանյան
Ռ. Վարդանյան
Ս. Թարխանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՅԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ

2020թ. Դեկտեմբերի 16
Գ. Սիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Սիս համայնք, գ. Սիս, հեռ. 098 29 00 29
էլ. փոստ sis.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«16» Դեկտեմբերի 2020 թվականի N 22-Ա

ՍԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետի,<<Նորմատիվ Իրավական ակտերի մասին>>ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով,*Համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հաստատել ՀՀ Արարատի մարզի Սիսի համայնքապետարանի աշխատակազմի, կառուցվածքը,աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելված 1, հավելված 2, հավելված 3:
2. Ուժը կորցրած ճանաչել Սիս համայնքի ավագանու 25.11.2019 թ-ի «Սիսի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 19 -Ա որոշումը :

Կից ներկայացվում է հավելված 1, հավելված 2, հավելված 3:

Ավագանու անդամներ՝

Կողմ (7) Դեմ (0) Ձեռնպահ(0)

Ա. Ղեգունց
Ա. Մարգարյան
Ե.Լազգիյան
Ա. Խաչատուրյան
Ա.Աղուշանյան
Ռ. Վարդանյան
Ս. Թարխանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՅԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ

2020թ. Դեկտեմբերի 16
Գ. Սիս

Հավելված 1
ՀՀ Արարատի Մարզի Սիս համայնքի ավագանու
2020 թ-ի Դեկտեմբերի 16-ի թիվ 22-Ա որոշման

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 8

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱ-ՉԱՓԸ /ՀՀԴՐԱՄ/ սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար
	ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
1	Համայնքի ղեկավար	1	230000
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	155000
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
3	Աշխատակազմի քարտուղար/1.2-1/	1	155000
4	գլխավոր մասնագետ / 2.3-1/	1	141000
5	առաջատար մասնագետ /3.1-1/	1	125000
6	առաջին կարգի մասնագետ/3.2-1/	1	113000
7	երկրորդ կարգի մասնագետ/3.3-1/	1	112000
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
8	Անասնաբույժ	1	89610
9	Գործավար	0,5	90000
10	Հավաքարար	0,5	90000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՅԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Հավելված 2
ՀՀ Արարատի Մարզի Սիս համայնքի ավագանու
2020 թ-ի Դեկտեմբերի 16-ի թիվ 22-Ա որոշման

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԱՆՈՒՇԻԿ>> ՀՈԱԿ ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 7

	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱ-ՉԱՓԸ/ՀՀԴՐԱՄ/ սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար
1	Մանկապարտեզի տնօրեն	1 դրույք	150500
2	Մանկապարտեզի դաստիարակ	1,25դրույք	145500
3	Մանկապարտեզի հաշվապահ	1 դրույք	89610
4	Մանկապարտեզի դաստիարակի օգն.	1 դրույք	89610
5	Մանկապարտեզի խոհարար	1 դրույք	89610
6	Մանկ.երաժշտական դեկավար	1 դրույք	89610
7	Մանկապարտեզի պահակ	1 դրույք	89610

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՅԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Հավելված 3

ՀՀ Արարատի Մարզի Սիս համայնքի ավագանու
2020 թ-ի Դեկտեմբերի 16-ի թիվ 22-Ա որոշման

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՍԻՍ-ԲԱ» ՀՈԱԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 5

	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱԿՈՐԸ	ԶԲԱՂԵՑՐԱԾ	Ֆիզիկական անձ
1	Տնօրեն	1 դրույք	0.5	0
2	Ընտանեական բժիշկ	1 դրույք	1.0	1
3	Ընտանեական բուժքույր	1 դրույք	1.0	1
4	Հաշվապահ	1 դրույք	1.0	1
5	Լաբորանտ	0,75 դրույք	0.75	1
6	Կրթական բուժաշխատող	0.5 դրույք	0.50	1
7	ԸՆԴԱՄԵՆԸ	5.25	4.75	5

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՅԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Սիս համայնք, գ. Սիս, հեռ. 098 29 00 29
էլ. փոստ sis.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«16» Դեկտեմբերի 2020 թվականի N 23-Ն

ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 Թ-Ի ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածների պահանջներով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1.Սահմանել Սիս համայնքում 2021թ-ի համար սահմանված հետևյալ տեղական տուրքերի տեսակները և դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլատվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 7500 դրամ,

բ. սույն կետի1-ին ենթակետի «ա» պարբերությունով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1500 դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 2500 դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է, նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 2500 դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 100000 դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 30000 դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 25000 դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000 դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5500 դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7500 դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10500 դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13000 դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 23000 դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000 դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5500 դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7500 դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10500 դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13000 դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 23000 դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 175 դրամ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար սահմանել

ա. առևտրի օբյեկտների համար՝ 5000 դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 25000 դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 200000 դրամ,

դ. խաղատների համար՝ 500000 դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ 250000 դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ 75000 դրամ.

10) համայնքի վարչական տարածքում համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և շինության թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է.

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7000 դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000 դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25000 դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 500 դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7000 դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12000 դրամ.

11) ավելանում սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1750 դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 750 դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով՝ 187.5 դրամ

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ի չափով՝ 75 դրամ

12) Սիս համայնքի անվանումը որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50000 դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 5000 դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար օրացուցային տարվա համար՝ 250000 դրամ.

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 1250000 դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2.5 մլն դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 3.5 մլն դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5 մլն դրամ.

16) համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար 50000 դրամ.

17) համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար

ա. կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում՝ 10000 դրամ

բ. հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում՝ 100000 դրամ

2. Սահմանել Սիս համայնքում 2021թ-ի համար հետևյալ տեղական վճարների տեսակները և դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և

հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց 5000 դրամ փոխհատուցման վճար.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց 5000 դրամ փոխհատուցման վճար.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց 5000 դրամ փոխհատուցման վճար.

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փաստաթղթով հիմնավորված ծախսերի փոխհատուցման վճար.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց 5000 դրամ փոխհատուցման վճար.

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց 2000 դրամ փոխհատուցման վճար.

7) Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար աղբահանության վճարը սահմանել՝

ա. կենցաղային աղբի համար՝ յուրաքանչյուր բնակչի համար՝ 100 դրամ

բ. ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

-ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3000 դրամ

-ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 10000 դրամ

գ. Իրավաբանական անձանց համար սահմանել հետևյալ սակագները.

-Առևտրի /այդ թվում՝ շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ՝ 1 քմ-ի համար 50 դրամ,

-արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինություններ՝ 1 քմ-ի համար 5 դրամ,

-կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինություններ՝ 1 քմ-ի համար 3 դրամ՝

-հյուրանոցների և հյուրանոցային ծառայություններ իրականացնող այլ հասարակական շինությունների մասով՝ 1 քմ -20 դրամ՝

-վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 15 դրամ.

դ. Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ 1 քմ մակերեսի համար՝ 50 դրամ:

8) Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար Սիս համայքնի կողմից կամ համայքնի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց յուրաքանչյուր երեխայի համար ամսական փոխհատուցման գումար սահմանել 5000 դրամ՝

9) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ 500 դրամ փոխհատուցման վճար.

10) Սահմանել համայնքի տարածքում անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի անասնաբուժական ծառայությունների ցանկը և գնացուցակը.

ա. Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն 500 դրամ

բ. Ծննդօգնություն

Թեթև միջամտություն 1000 դրամ

Ծանր միջամտություն 5000 դրամ

գ. Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից /բացառությամբ՝ <<Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում>> պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների/-

- մանր կենդանի 200 դրամ,

-խոշոր կենդանի 300 դրամ

դ. կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար-500 դրամ

ե.Ախտահանություն - 1բմ 100 դրամ

զ. միջատազերծում/դիզինֆեկցիա/- 1բմ 100 դրամ

է. Կրծողների ոչնչացում /դեռատիզացիա/ - 1բմ 100 դրամ

ը. արհեստական սերմնավորում- 5000 դրամ

թ. Կենդանու հերձում

-մանր կենդանի 1000 դրամ

-խոշոր կենդանի 3000 դրամ

ժ. Կենդանու բուժում- յուրաքանչյուր այցելությունը 1000 դրամ

ի. Կենդանիների նախաապանդային գննում՝

-մանր կենդանի-500 դրամ

-խոշոր կենդանի- 1000 դրամ

Սույն որոշման 1-ին կետի դրույքաչափերին կիրառվել է 0.5 գործակից:

Ավագանու անդամներ՝

Կողմ (7) Դեմ (0) Ձեռնպահ(0)

Ա. Ենգոյան

Ա. Մարգարյան

Ե. Լազգիյան

Ա. Խաչատուրյան

Ա. Առուշանյան

Ռ. Վարդանյան

Ս. Թարխանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՅԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ

2020թ. Դեկտեմբերի 16

Գ. Սիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Սիս համայնք, գ. Սիս, հեռ. 098 29 00 29
էլ. փոստ sis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» Դեկտեմբերի 2020 թվականի N 24-Ն

2021 Թ-Ի ՀԱՄԱՐ ՀՈԱԿ <<ԱՆՈՒՇԻԿ >> Մ/ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ , ՎԱՐՁԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 19-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ *համայնքի ավագանին որոշում է*.

Սիս համայնքի <<Անուշիկ >> մ/մանկապարտեզ ՀՈԱԿ-ում ծնողական գումարի վարձավճարի չափը 2021թ-ի համար սահմանել ամսական 5000 դրամ:

Ավագանու անդամներ՝

Կողմ (7) Դեմ (0) Ձեռնպահ(0)

Ա. Բեգուն
Ա. Մարգարյան
Ե. Կազզիյան
Ա. Խաչատրյան
Ա. Առուշանյան
Ո. Վարդանյան
Ա. Թարխանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՅԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ

2020թ. Դեկտեմբերի 16
Գ. Սիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Սիս համայնք, գ. Սիս, հեռ. 098 29 00 29
էլ. փոստ sis.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«16» Դեկտեմբերի 2020 թվականի N 25-Ն

ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

Համայնքի 2020 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները:

Համայնքի բյուջեի ծախսային մասի

1.1.1 Հատվածի

-5112 հոդվածը պակասեցնել 186856,5 (հարյուր ութսունվեց հազար ութ հարյուր հիսունվեց դրամ, հիսուն լումա) դրամով

-5122 հոդվածը պակասեցնել 749290 (յոթ հարյուր քառասունինը հազար երկու հարյուր իննսուն) դրամով

-5129 հոդվածը պակասեցնել 392500 (երեք հարյուր իննսուներկու հազար հինգ հարյուր) դրամով

-4235 հոդվածը պակասեցնել 50000 (հիսուն հազար) դրամով

-4261 հոդվածը ավելացնել 50000 (հիսուն հազար) դրամով

1.6.1 հատվածի

-5129 հոդվածը պակասեցնել 14504000 (տասնչորս միլիոն հինգ հարյուր չորս հազար) դրամով

5134 հոդվածը պակասեցնել 1600000 (մեկ միլիոն վեց հարյուր հազար) դրամով

4.5.1 հատվածի

-5113 հոդվածը պակասեցնել 185000 (մեկ հարյուր ութսունհինգ հազար) դրամով

-5134 հոդվածը ավելացնել 450000 (չորս հարյուր հիսուն հազար) դրամով

-5112 հոդվածը ավելացնել 17167646,5 (տասնյոթ միլիոն հարյուր վաթսունյոթ հազար վեց հարյուր քառասունվեց դրամ, հիսուն լումա) դրամով

Ավագանու անդամներ

Կողմ (7) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Ա. Բեգունցը
Ի. Լաճգինյան
Ա. Մարգարյան
Ա. Թարխանյան
Ա. Առուշանյան
Ռ. Վարդանյան
Ա. Թարխանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՅԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ

2020թ. Դեկտեմբերի 16
Գ. Սիս